ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ՊԸԾՁԲ-17/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգով էլեկտրոնային ձևով Աբովյան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ արտաքին աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

17/02/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ),
Ա. Զոբանյանը (ԳՊ/ԳԱ), Վ. Օհանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

Պատվիրատու՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ՊԸԾՁԲ-17/4» ծածկագրով Աբովյան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ արտաքին աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ՊԸԾՁԲ-17/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի փետրվարի 17-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին

Մ. Գուլոյան

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի				
Հ/հ	Անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը	Տ/Փ-ի ստացականի հ/հ	Հասցեն
1	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	auditservicellc@gmail.com (010) 57-75-44	000035983	ք. Երևան Մովսես Խորենացու փող., 47/7 շենք, բն.46
2	«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ	staff@group-avc.com	000036134	ք. Երևան, Նուբարաշեն 10փ.-6
3	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	general@asatryans.com, (060) 53 23 23	000036139	ք. Երևան, Սախարով Բիզնես-Կենտրոն Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

Մ. Գուլոյան

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝				
			Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկ-ված գինը (առանց ԱԱՀ)*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Աբովյան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ արտաքին աուդիտորական ծառայություն-ների ձեռքբերում	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	1 000 000	200 000	1 200 000	240 000	1 440 000 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար)
		«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ	816 000	54 000	870 000	174 000	1 044 000 (մեկ միլիոն քառասունչորս հազար)
		«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	500 000	75 000	575 000	115 000	690 000 (վեց հարյուր իննսուսուն հազար)

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

Մ. Գուլոյան

4.1 «Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ վճարման պահանջագրի 13-րդ կետի՝ մասնավորապես նշված չէ արժույթի կոդը:

4.2 «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ Հավելված N 9-ի (վճարման պահանջագիրը բացակայում է) և լիցենզիայի պատճենի (էլեկտրոնային ստորագրությունը բացակայում է):

4.3 «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին

Մ. Գուլոյան

5.1 Մերժել «Աուդիտ» ՍՊԸ-ի և «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետ, «ԱԲՀ-ՊԸԾՁԲ-17/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 1-ին մասին 7.3 կետ):

5.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը: Ներկայացված և բավարար գնահատված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հետևյալ մասնակցին.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկված գինը (առանց ԱԱՀ)*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
Չափաբաժին N1. Աբովյան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ արտաքին աուդիտորական ծառայությունների ձեռքբերում						
1	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	500 000	75 000	575 000	115 000	690 000 (վեց հարյուր իննսունուն հազար)

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

Մ. Գուլոյան

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

6.2 Հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

6.3 Հրավերի 7.7 կետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

6.4 Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Ջ. Սարգսյան

Ա. Հոբանյան

Լ. Շառաջյան

Վ. Օհանյան

Քարտուղար՝ Տ. Հոհրաբյան